



ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԶՆԱԳԵՏԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Երջին մի քանի տարիների ընթացքում Սովետական Հայաստանի հնագետները զգալի հաջողություններ են ձեռք բերել նախնադարյան հասարակության ուսումնասիրության բնագավառում: Նրանք Հայաստանի տեղիտորիայի վրա հայտնագործել են հին քարեդարյան շրջանին պատկանող բազմաթիվ գործիքներ, որոնք հիմք են տալիս համարձակ դնելու պալեոլիթի (հին քարե դարի) գոյությունը Հայաստանում իր վաղ ստորին և միջին շրջաններով:

Հնագիտական այդ ուսումնասիրությունների ասպարեզում առանձնապես մեծ է երիտասարդ հնագետ Սանդրո Սարգսյանի կատարած աշխատանքը:

Երիտասարդ գիտնականն աշխատում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի հնագիտական բաժնում: Չնայած երկար պատմություն չունի նրա աշխատանքային փորձը, սակայն այդ կարճ ժամանակամիջոցում նա ձեռք է բերել մեծ հմտություն. անվերջ որոնել, պեղումներ է կատարել Հայաստանի ընդերքում և իր լուրջ ու հետևողական աշխատանքի շնորհիվ հասել հետաքրքիր արդյունքների, որոնք ամփոփել է մի ծավալուն աշխատության մեջ, որ կրում է «Պալեոլիթը Հայաստանում» վերնագիրը: Սարգսյանի այդ ուսումնասիրությունը կարևոր ներդրում է Հայաստանի հնագիտության ուսումնասիրության բնագավառում:

Շնորհիվ հետևողական և մանրազնի ուսումնասիրությունների, 1943—1949 թվերին երիտասարդ հնագետին հաջողվել է հայտնաբերել պալեոլիթյան մոտ 12 կայան Արտին լեռան վրա և Արզնիում: Այդ կայաննե-

րից հայտնագործած նախնադարյան մարդու բարի գործիքների հետազոտությունները հնարավորություն են տալիս այժմ սահմանելու Հայաստանում նյութական կուլտուրայի զարգացման անընդհատությունն ու հաջորդականությունը՝ սկսած մարդկային պատմության արշալույսից՝ վալդեյան ստորին աստիճանից մինչև վերին աստիճանը կամ հնագիտական ստորին պալեոլիթի մինչև լեյսյան և շելյան կուլտուրայի պոլիտիկի մինչև նեոլիթ: Սարգսյանի ձեռք բերած հնագիտական վաղագույն գործիքների միջոցով հնարավոր է դառնում վերջնականապես հաստատել մարդու գոյությունը Հայաստանում հին քարե դարի բոլոր էտապներում:

Արտին լեռան վրա հայտնաբերած օբսիդիա (վանակատ) քարից պատրաստած նախնադարյան մարդու գործիքները երիտասարդ հնագետը տեսակավորել է ըստ արտադրության տեխնիկայի և ենթարկել ժամանակագրական դասակարգման:

Հայաստանում գոյություն ունեցած նախնադարյան հասարակության զարգացումը երիտասարդ հնագետը ուսումնասիրել է ոչ միայն հայտնաբերված հին քարեդարյան մարդու գործիքների հիման վրա, այլև ազգագրական օժանդակ նյութերի, երկրաբանական տվյալների և այլն: Այս եղանակով նրան հաջողվել է պարզել հնագույն ժամանակների պատմության ընդհանուր շղթան՝ ուրվագծելով մարդկային պատմության զարգացման այդ վաղագույն շրջանի ամբողջական պատկերը:

Իր ուսումնասիրության մեջ Սարգսյանը տվել է Հայաստանի շորորդական ժամանակաշրջանի աշխարհագրական միջավայրի և երկրաբանական պայմանների հա-

մառնու բնութագրությունը: Նրա կարծիքով, Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, մարդիկ են ապրել դեռևս երրորդական շրջանի վերջից: Այդ տեսակետը նա հիմնավորել է հնագիտական փաստական նյութերով:

Սարգարյանը զբաղվել է պալեոլիթի արտադրողական գործիքների ուսումնասիրությամբ: Հայաստանի պալեոլիթի առաջին՝ ամենավաղ շրջանը, ներկայացված է Արտին լեռան (Բողոտլու) Թալինի շրջանի, Արագած լեռան լանջերին գտնվող պալեոլիթյան կայաններով: Այս կայանները հայտնաբերված են Սարգարյանի կողմից 1943—1949 թվերին կատարված հետազոտությունների ընթացքում: Արտին լեռան կայաններն ունեն հնագիտական մեծ նշանակություն:

Արտին լեռան պալեոլիթյան կայանները միաժամանակ հանդիսանում են ՍՍՌՄ տերիտորիայում մինչև այժմ հայտնի մարդկային կուլտուրայի հնագույն մնացորդներից մեկը աշխարհում: Նրանք թույլ են տալիս հնագետներին լրիվ բնութագրելու նախնադարյան մարդու պատմությունը Հայաստանում՝ սկսած ստորին պալեոլիթից մինչև նեոլիթ: Այդ հայտնաբերումով վերջնականապես լուծվում է Հայաստանում մարդու բնակվելու ժամանակի հարցը, որը տեղի է հարյուր հազարավոր տարիներ:

Արտին լեռան հիշյալ կայանների հին քարեդարյան մարդու գործիքների մնացորդները ամենահնագույն հավաքածուները պատկանում են վաղ շրջանի կայաններին, կամ հնագիտական ստորին պալեոլիթի՝ մինչև շելյան, շելյան և հետագա աշելյան կուլտուրայի էպոխաներին:

Ստորին պալեոլիթի մինչև շելյան և շելյան ժամանակի կուլտուրային են պատկանում նաև Նուռնուի և Թեջրաբակի մոտ գտնված պալեոնտոլոգիական գյուտերը՝ նախնական ձիու, էտրուսական ռնգեղջյուրի և վաղեմի ալլ կենդանիների կմախքները:

Աշելյան կուլտուրային ժամանակակից են համարվում Լենինականի մոտ գտնվող պալեոնտոլոգիական գյուտերը, ուր հանդիպում են՝ փղի, ռնգեղջյուրի, նախնական ձիու, եղջերուի և ալլ կենդանիների մնացորդներ:

Հնագետ Սարգարյանի հայտնագործած միջին պալեոլիթի քարե գործիքների հարուստ հավաքածուն ցույց է տալիս պալեոլիթյան տեխնիկայի հետագա զարգացումը, որը հայտնի է մուստերյան անունով: Հայաստանում մուստերյան գործիքներ գտնվել են առաջին Արտին լեռան վրա, Արզնիում և Պեմզաշինում (Հյուսիս-արևմտյան Արագած): Հայաստանում գտնված մուստերյան

գործիքների ուսումնասիրությունը հիմք է տվել Սարգարյանին հիմնավորելու պալեոլիթի ստորին և միջին աստիճանների անմիջական կապը: Մուստերյան դարաշրջանի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն նաև Հայաստանի այդ ժամանակների ֆաունայի մնացորդների հայտնագործումները:

Արտին լեռան կայաններում հեղինակը հայտնաբերել է նաև վերին պալեոլիթի բազմաթիվ գործիքներ, որոնք ամբողջական պատկերացում են տալիս Հայաստանում պալեոլիթի ժամանակաշրջանի մասին՝ իր անընդհատ զարգացմամբ, իր ենթաշրջաններով, վերջնականապես հաստատվում է Հայկական բարձրավանդակում նախամարդու կողմից անընդհատ բնակեցության տեսության անվիճելիությունը:

Հնագույն կուլտուրայի այս հարուստ մնացորդների բազմազանությունը վկայում է նաև Արտին լեռան պալեոլիթյան կայանների տեսականության և արհեստանոցների գոյության մասին:

Այսպիսով, Արտին լեռան հնագիտական և Հայաստանի բազմաթիվ վայրերի պալեոնտոլոգիական գյուտերը տալիս են ողջ հին քարե դարի լրիվ պատկերը՝ կրելով պալեոլիթյան կուլտուրայի բոլոր ժամանակների օրինաչափ զարգացման հետքերը:

Չնայած այն քանին, որ Հայաստանում պալեոլիթյան կուլտուրան միայն վերջերս է հայտնի դարձել և այդ բնագավառում կատարված աշխատանքները ընդգրկել են միայն Սովետական Հայաստանի տերիտորիայի առանձին վայրերը, — դեռ բոլորովին չի ուսումնասիրված Արևմտյան Հայաստանը, — այնուամենայնիվ, մարդկային հասարակության պատմության այդ հին շրջանի հուշարձանները Հայաստանի համար տալիս են համարյա անթերի պատկերներ:

Նոր հայտնաբերումների լույսի տակ պետք է վերջնականապես հերքված համարել Հայաստանը մարդու կողմից ուղ բնակեցվելու և Հայաստանը համատարած կերպով սառուցյով պատած լինելու առասպելը, որը մինչև վերջերս լայն քաղաքացիություն ուներ գիտության մեջ:

Այսպիսով, Հայաստանը հանդիսանում է մարդկության հնագույն կուլտուրայի կենտրոններից մեկը՝ Հարավային Ասիայի, Միջերկրական և Սովետական Միության հարավային մասի պալեոլիթյան կուլտուրաների կապող օղակը:

Հայաստանը, ինչպես և ողջ Անդրկովկասը, հանդես են գալիս որպես նախնական մարդու բնօրրաններից մեկը: